Արձանագրություն N 4

ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

03 փետրվարի 2020թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Մամիկոն Հովհաննիսյանը, անդամներ՝ Գոհար Սարգսյանը, Գայանե Տոռոզյանը, Էմմա Ադամյանը և քարտուղար Էռնեստ Դավթյանը:

Օրակարգ

գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայցած որոշումը չեղարկելու և գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրելու մասին

1. Հիմք ընդունելով գնումների հետ կապված բողոքը քննող անձի 01.01.2020թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/102 որոշումը, որով բավարարվել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ դադարեցնել 24.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայցած «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի և «Սիլ Ինշուրանսի» ԱՓԲԸ-ի գնային առաջարկները հրավերի 1-ին մասի 5.2 կետին չհամապատասխանելու վերաբերյալ որոշումը:
2. Հանձնաժողովը քննարկեց և որոշեց՝

   2.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի, «Սիլ Ինշուրանսի» ԱՓԲԸ-ի, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի, «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

   2.2 Էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցել և հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին, «Սիլ Ինշուրանսի» ԱՓԲԸ-ին, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ին և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին:
3. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները տեղի կունենան ք. Երևան, Նալբանդյան 128, գլխավոր մասնաշենք, 5-րդ հարկ N501 սենյակ հասցեով 2020թվականի փետրվարի 6-ին ժամը 10:00-ից մինչև 10:30-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ՝ _____ Մամիկոն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Գոհար Սարգսյան

_____ Գայանե Տոռոզյան

_____ Էմմա Ադամյան

քարտուղար՝ _____ Էռնեստ Դավթյան